

Այսպիսով, եթե կյանքի արտահայտման թե՛ հիմնական և թե ինդիվիդուալ բազմաձևությունները, որոնց կայունությունը պահպանվում է սերունդներում, հսկվում և իրականանում է նույլեինարթունների կառուցվածքով, ապա ժառանգաբար՝ ծնողներից սերնդին կայուն հասկանիշների փոխանցումը պետք է որ նույնպես կապված լինի նույլեինարթունների հետ:

Ուրեմն՝ բոլոր կենդանի էակների, այդ թվում և մարդու ժառանգական հասկությունների կայուն փոխանցումը սերնդին կամ նրա փոփոխությունները, որ աեղի են ունենում կյանքի պայմանների ազդեցության տակ, նույնպես կապված են նույլեինարթունների կառուցվածքի հետ:

Ահա թե կյանքի էության խորքում թաքնված ինչպիսի կարևոր օրինաչափություններ են հայտնաբերել բիոբիմիկուններ, գենետիկներն ու նրանց մյուս վիճակիցները՝ երկարատև որոնումներից հետո:

Եվ այդ հպոր, համագործակցված միտքը պահպան է առաջ:

Ո՞ւր:

Դեպի նույլեինարթունների սինթեզումը և արհեստական եղանակով սպիտակուցներ ստանալը:

Իսկ հետո՝

Հետո պայմաններ կստեղծվեն հասարակության առօրյա կարիքները արհեստական եղանակով ստացված սպիտակուցներով բավարարելու համար:

Այսուհետև, գիտությունն անկանկած կհայտնաբերի սպիտակուցների և նույլեինարթունների այն կոմպլեքսը, որը նյութափոխանակության միջոցով ինքնավերարտադրման ընդունակություն կունենա, այսինքն՝ արհեստական ճանապարհով կստեղծվի կյանք:

Դա կլինի մարդկության պատմության ամենամեծ հայտնագործությունը:

Եվ մենք այս կանգնած ենք այդ մեծ հայտնագործության շեմին:



## ԹԵՐՄՈԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԱՆԱԿ

Դրեպինի բժշկական հեեւտրունիկայի գիտատեխնիկական կենտրոնում ստեղծել են թերմոէլեկտրական «դանակ», որով վիրաբուժը կարող է անարյուն կտրվածքներ անել: Այդպիսի «դանակ» ոչ միայն կտրում է, այլև շերմության ներգործության տակ մակարդում է արյունը, որի շնորհիվ արյունատար անորները փակվում են:

Առև գործակալություն

## ԿԱՐՑԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺՎՈՒՄ Ե ՈՒԼՏՐԱՉԱՅՆՈՎ

Բուժման այս մեթոդը կիրառում են Տոկովի Կենտրոնական հիվանդանոցի բժիշները:

Ակնախոռոչի վրա ազդում են 12000 հերց հաճախականության ուլտրածայնով: Ուլտրածայնի ներգործությունից առաջացած տարությունը և աչքի թաղանքի կրծառումը ուժեղացնում են արյան շրջանառությունը և ակտիվացնում նյութափոխանակությունը ցանցում: Ուլտրածայնի ավելցությունը բարենպաստ է ազդում նաև ակնախոռչի այլ նյարդային վերջույթների վրա:

Մի քանի շաբաթվա ընթացքում նոր մեթոդով բուժվել է 220 մարդ: Հիվանդների 80 տոկոսի մոտ տեսողությունը զգալիորեն լավացել է: Վատ հետևանքներ չեն նկատվել:

ՏԱԱԱ